Մեր փոխարէն պատասխանեց մեր հիւրընկալը, ասելով, որ Աղթամարայ վանքիցն են գալիս:

— Ուրեմն ուխտաւորնե՞ր էք, — հարցրեց նա:

— Այո՛, ուխտաւորներ ենք, — պատասխանեց Ջալլադը, հետազօտելով նրա դէմքի թթու արտայայտութիւնները:

Առանց մեր հարցնելու, նա ասաց, թէ ինքը Բաղէշի դպրոցների վարժապետն է եւ, տասն տարուց աւելի կը լինի, որ այնտեղ ուսուցչութեան պաշտօն է վարում եւ ուրիշ շատ գործեր է կատարում:

— Ի՞նչ էք սովորեցնում, — հարցրեց Ջալլադը:

— Ծանօթացնում ենք սուրբ գրքերի հետ, — պատասխանեց նա:

— Այդքանը՞ միայն:

— Մի փոքր եւս աշխարհագրութիւն եւ թոաբանութիւն ենք սովորեցնում:

— Շա՞տ է այնտեղի բողոքականների թիւը:

— Այնքան շատ չէ: Իսկ գիւղերում տիրոջ գործը աճելու վրայ է:

— Գիւղերում դպրոցներ չունէ՞ք:

— Դեռեւս ո՛չ: Այժմ մենք բաւականանում ենք միայն կիրակնօրեայ կրթարաններով:

— Ովքե՞ր են ձեր գլխաւորները:

— Ամերիկացի միսիոնարներ:

— Շա՞տ են թոով:

— Մի քանի ընտանիքներ միայն:

— Իսկ նրանց հասցրած աշակերտների թիւը՞:

— Այժմ բաւական կը լինէին:

— Ի՞նչ գործով են զբաղոած:

— Տիրոջ խօսքը տարածելու գործով. կամ քարոզութիւններ են անում, կամ վարժապետութիւն են անում եւ կամ թարգմանութիւններով են զբաղոած:

— Դուք էլ, ի հարկէ, նրանց աշակերտներից էք:

— Եւ առաջին աշակերտներից: Երբ միսիոնարները դեռ նոր էին եկած, իմ հայրը նրանց մօտ խոհարար էր, ինձ վերառին ու սովորեցրին: